ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԵՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԴՐՕՇԱԿԸ

Սեպտեմբեր։—

ՆՈՐ տուն՝ նոր ապրումներ։

Տունը Թարխանեան փողոցումն է, Երեւան։ Թրքաց նախկին այս մասում ամառը փոշի է, ձմեռը ցեխ։ Աղքատ եւ լուռ մի փողոց է, որ կիսաքանդ, դունաթափուած եւ խոնարհ իր շէնքերի հետ միասին նախ թաւալ է դալիս, ապա ընկճւում, սողոսկում, փլած իր ուսերով մաղլցում մայթերի վրայ, յետոյ շիտակ վազում է ու վերջանում զէրոյով՝ դլուխը մոայլ մի չեօլի դէմ ճզմուած։

Տարուայ բոլոր եղանակներին պարապը պատուած կօշիկներով ման է դալիս, անձրեւի հետ խօսում, արեւի տակ կիզւում եւ բորոտ տուների շնչին էութեան մասին անձայն եւ տըխուր մի երգ ասում։ Հաղուագիւտ անցորդների ոտքերից նա կախւում է ծանր շղթայի նման, յաւիտենակում է ձայն եւ աղմուկ, տանիքների վրայ լայն ծակեր է բաց անում, պատերի տակ խաւար է դիզում, եւ տարիներից ի վեր մոռցուած, կեղտոտ, պատռուած ոֆիչի իր դէմքով՝ պաղատագին, երկնքից մահ է մուրում։

Այսօր, աշնանային քամին, երեք թառամած տերեւներ է բերել, օդի մէջ դարձնում է։ Դեղին այդ պարը փողոցին կեանք է տալիս։

Բնակարանիս ճիշդ դիմացը միլիցիականների դրասենեակն է։ Երբեմն, ոստիկաններից մէկը հրացանը ձեռքին բռնած դուրս է դալիս, մի քիչ ման դալիս, նայում է աջ, նայում է ձախ, յօրանջում ու ներս է մտնում։

Իսկ փողոցը դեռ երկար ժամանակ շարունակում է յօրանջել։

Տունը մէկ յարկանի է եւ քարաշէն։

Վերջ ի վերջոյ հաստատուն մի պատ է բաղում պատուհաններով։ Կարծես դլխին հըսկայ մի հարուած է իջել եւ փորը կիսով մտել է հողի տակ։ Վարը, փողոցի մակերեսի վրայ երկու ծակեր են բացուած, որտեղից լոյսը՝ փոշիի, անձրեւի եւ ցեխի հետ խառնուած՝ աղտոտած դէմքով ներս է խուժում եւ կտաւ հիւսող վանեցի դաղթական ընտանիքի շուրջը խաւար մատերով նշաններ է անում։ Ընտանիքը չարացած աչքերով նայում է դուրս եւ միլիցիականի կոպիտ կօշիկներն է տեսնում։

Այն, որ անուանում եմ բնակարան՝ մեծ մի սենեակ է, նեղլիկ մի նրբանցքով փողոցի մուտքի մօտ։ Ժամանակին ճերմակ ձեղունը տեղ տեղ վար է իջել, ուռել, անհանդիստ կոհակի պէս. պատուհանները պառաւ մարդու անատամ բերանի նման ապակիից զերծ են, տանիքը մեծ պղնձէ ամանների մէջ արցունքաթոր հեծում է, եւ քամին բոլոր անկիւններում խաղում է։

Ջուր, ալիւր եւ «Խորհրդային Հայաստան», պատուհանների կմախքների մօտ մաքառում են հովի դէմ։ Աշնան բոլոր չորացած տերեւները ճայնում են։

Տեղաւորւում ենք։

Երկար դիմումներից յետոյ, երաժշտական ստուդեան զրկել է երկու մահճակալ։ Ճօճում է մի համակ։ Իսկ ես տեղաւորուել եմ մեծ մի սնտուկի վրայ, որի մէջքը դժբախտաբար կոլոր է եւ անգութօրէն կարծր։

Ջուանի վրայ լայն սաւաններ։ Պատ՝ սենեակը երկուսի բաժանելու համար։ Ննջարան, ընդունարան։ Դաշնակ, նախկին սենեակում դտած, ու բոլոր արատների վրայ մի մի պատկեր, էնպէս՝ դեղարուեստական անփութութեամբ դամուած։

Մեծ հարց է խոհանոցի հարցը։ Երկար վիճաբանութիւնից յետոյ, որին մասնակցում է ընտանիքի նոր անդամ իդդիրցի Սաթօն, որոշւում է նրբանցքի կէսը յատկացնել ատամոքսային գործողութեան կարեւորագոյն այդ մասին։ «Փողոցի դուռը կը բանանք եւ հոտը դուրս կը գնայ»,— ասում է Սաթօն։— «Մի վարագոյր կը քաշենք»։ Հեշտ է ասել մի վա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան